

313 2 26

ընտա էեալինի տէօյմէյէ համ իտէր վէ տէօյէր, տիկէրի, գարը նէ՝ տիմէք օնլարա պիղ գուամանտա իտէրիղ տէ- յիպ խըզմէթքեար կիպի գուլլանմագ- տա, վէհասը ճիչ նէվինտէն օլուպ, նէ սէօզէ գարըլմալը նէտէ էրքէք օլ- տուղու մահալտէ սէրպէսթճէ էֆքեար պէյան իտէպիլմէլի, անճագ աղղը տիլի պաղղը հայվանլար միսալի օթու- լուպ տիյնէմէլի, զէվալը ֆամիլեա- լար, սանքի Ալլահ հէր զազալը պուռ- լարա վիրմիչ :

Պիղ չօք քէրրէ պէօյլէրէ նասի- հաթ իթմիլիղ քի, օնլար տալի պի- զիմ կիպի առամ տըրլար, տուլղու սա- հիպի տիրէր, թըպքը պիղիմ կիպի տիւլիւնիպ էֆքեար պէհան իթմէք- լիկէ, գօնուչմագլըղտ հադգլուրը վար տըր :

Պու եօլտա պիր գաչ տէրէլէրտէն սու թաշըտը գանալըլըմ տէյի ի- սէ, նիհայէթ, ճնէ գատար օլսա էր- քէք էրքէք տիր, գարըտա գարը տըր՝ ճէվապընը ալըպ իչի պուրալարա կէ- թիւրէպիտիք, ինչալլահ աղ փաղըթ- տան քէնտիլէրինի ընթիլի օլտուղու հալտէ հիչ պիր ֆարգլարը օլմատըղը ճէվապընը ալըրը :

Բայիթալիմտա պուլունան նիսա թայիթէլէրիմիղէ կէլինճէ, պուռլար պալէատէ զիքը իթմիլիմիղ նէվինտէն հադարէթ կէօրմէքտէ տէյի տիրէր, չիւնքի սէրպէսիլէթէրի վար տըր, ֆադաթ պաղա կէօնա գուլմու հա- դարէթ կէօրմէլէրի էքսիք տէյի տիրէր : Պու ճիւմէլ իլէ պուռլարըն պիր գաչ նէվի ուլղունսուղ հադէթէթէրինի մա- գուր տիլէյէթէք պէհանէ միսարա- աթիլա, քէնտի նամուլարընըն վիգա- յէսի իլին օլ թարզ հադէթէթէրինտէն կէրի տուրմալարընը նասիհաթ իտէրիղ :

Մօտա տէյիպ տիւլիւ պին գընա- ֆէթէլէրէ կիրտիլէրինտէն պաղա, շինթօն թապիլի իլէ պիր թագըմ հա- պանճը սալլարը թօրարլանը պօհճա գատար հէյպէթին պաշլարընա գօյ- մագտա մահէա նէ՝ հէյէ պիր միտ- տէթտէն պէրու պիւթիւն պիւթիւնէ աւըպ նէվինտէն օլարագ, պիր մօտա տալի չըգալմըլար, եանի պըլըք բէյ- տա իթմէք, քուռ նէ՝ տիմէք օլաճագ, մէղըլուր ալէամէթէր իլէ էհալիլի քէն- տիլէրինէ թէյիլի իթմէք արգուսու տիմէք օլաճագ, չիւնքի պաղա կէօ- նա մանէա վիրիլէմէք :

Աճէպա պուռլարըն պու թուրը հա- րէթէթէրինէ սէպէպիլէթէ վիրէն քիմ- լէր տիր, երինէ էրքէք էհալիլիմիղ տէ- յիլմի, մէկէր հէր քէս ֆամիլեալընը, հէյիլէթէրինի, գըզընը, պուռ կիպի հարէ- քէթէթէրտէն մէն իտէմէք մի, բէք ալէա իտէպիլիլի, ֆադաթ ֆամիլ- եա եախօտ նիսա թայիթիսի նէ տիմէք օլտաճաղըն հալէա չօղլարըմըլ պիլմէ- մէքտէյիլ :

Միւլէլիլի, գիքը օլունան հագ- ողղըլը վէ թէրպիլիսիլիլին էօնիւ անճագ մէքթէպլէր սայէսիլտէն ալը- նապիլէթէլինտէն, միւտիրի պուլուն- տուղունուղ վէ միլլէթիմիղտէ էմալը կէօրիլմէմիլիլիլի թանէհիք Ագապէան վէ ֆանոստան մէքթէպլէրինիլ իլէրի կիթմէսի իլին էօթէտէն պէրու ճան- սիլէրանէ չալըլտըլընըլա չօղլարը կի- պի թէյէքքիւրի աղիմիմիլիլին թագտի- մի իլէ մէքթէպլէրինիլ զաղէթայի մի- լէպէրինիլտէ տէրճինէ հիմէթ պու- եուլմանըլա ըրճա իտէրիլ :

Սատըգ տօսթունուղ Ասուաճատուր Ս. ի Սուլթանիւն Լանեալը

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆ Մէգուլուրեան երկսեռ վարժարանի վարժարանս յաճախող ցերեկօթիկ մանկուոյն մեծարոյ ծնողաց կը ծա- նուցուի, որ յառաջիկայ սեպտ. 1 ամ- սագլինէն սկսեալ սա պայմանով կա- րելի է տղաքնին ընդունիլ ի վարժա- րանս :

Նախակրթարան, ուր կուսանին տ- չակերտք. գիր, ընթերցում, քիմիա- վարժութիւն, թիւ, մանր ուսմունք Բրիտանական հաւատոյ, համառօտ պատմութիւնք, աղգային երգք, քն- տանեկան և նիւթական բառեր, 1 1/2 մէկ ու կէս մէճիտ ամսաթոշակ կան- խիկ վճարով :

Ոսումթուրահ, ուր աստիճանաթար կուսանին տղայք. Հայերէն, Տաճիկ- րէն, Ֆրանսերէն և Անգլիերէն լեզուք, բարոյական և կրօնական ուսմունք, աղգային և սրբազան պատմութիւնք, գրագիտութիւն, տրամաբանութիւն, թուագիտութիւն, երկրաչափութիւն, գրահաշիւ, աշխարհագրութիւն, գը- ծագութիւն, բնագիտութիւն : 2 եր- կու մէճիտ կանխիկ վճարով, Անգլ- ուսանողք 2 1/2 :

Օրիորդաց սրահ, ուր Անգլ. և Տաճ- կերէնէ զատ ամեն ուսմունք կաւանդը- ուին, միանգամայն ձեռագործ, կարան և չափաւոր պար կուսանին, մի և նոյն տուրքն ունի, Այս հայուէն դուրս է դաշնակն, որոյ համար իսկ 2 երկու արծաթ մէճիտ առանձին տուրք վը- ճարելու են ուսանողք :

Ամարանոյ երթողներէ զատ բացա- կայութեանց թոշակներն երբէք անվը- ճար չընդունուիր, այս կարգի տղայք ալ սովորական տրոյք մէկ ու կէսը վը- ճարելու են :

Գիշերօթիկներու թոշակն 2 1/2 Օսմ. լիւրայ, երեք ամիսը միանգամ կանխիկ վճարելի, աւելի մանրամասն տեղե- կութիւն ուղղող կրնայ վարժարանիս տնօրէնութեան դիմել :

Ցաւ է մեզ տեսնել որ երկու տարիէ ՚ի վեր վարժարանիս թոշակաց պայմա- նագիրը, զոր ուղղած եմք իւրաքան- չիւր ծնողաց կանխիկ վճարման համար մեծ մասամբ մինչև յայսօր գեռ չեն գործադրած, ասոնցմէ ոմանք կան- խիկ չվճարելէ զատ, ամիսներով կեր- կարաճքեն, գիրքերու և մարդըր- կելու, աղաչելու որ այն տուրքները տան : Ոմանք որոշեալ թոշակը չեն սւ- ղեր վճարել և կէսը տարիներով կամ բնաւ չեն վճարած . ասոնք փոխանակ զմեզ քաջալերելու կը վճատեցնեն, մինչդեռ մեզ օր օրի ծախքերնիս կա- ւելցնենք ընտիր դասատուներ կը բե- րենք, նոր նոր բարեկարգութեանց ձեռք կը զարնենք, դպրոցական գոր- ծիքներու պակասը կը լեցնենք կամ նորը կը շինենք . պէտք եղած փոխա- ութիւնը կընենք մեզ յանձնուած աղ- զին զատկաց մօտաւոր և բարոյական կրթութիւնքն յառաջ մղելու նպատա- կաւ :

Արդ այսպիսեաց համար մեր կողմէն խոհեմութեան չափն այլ ևս լցուած ըլլալով, այժմէն իմաց կուտամք հը- րապարակաւ, որ կամ վերոգրեալ պայ- մանները ճշտու գործադրեն և կամ տը- դաքնին վարժարանէս առնուն :

1872 օգոստ. 8
Հիսար տիպի մեծ փողոց թիւ 93
Մ. Ս. Մէգուլուրեան

Շու աթիլտէքի պահօ, օգունմանա վէ միւթալէանա շաւան պուլունտու- ղունտան, այնէն տէրճինէ միւսարա- աթ իտէրիլ :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԿԱՆԱՆՑ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Կանացի սեռի սկզբնական կրթու- թեան պահանջը Եւրոպայի քաղաքա- կիրթ ազգերի, նաև ամէն գիւղացու- կեանքի անհրաժեշտ պայմաններէն մէկն է : Սրա ապացոյցն են այն բաղ- մաթիւ դպրոցները, ուր երկու սեռն գրեթէ նոյն ուղղութիւնով տարրական կրթութիւն և ուսումն են ստանում : Ամէն փոքր ի շատէ հասկացող մարդ- լիափագում է և աշխատում իւր աղջ- կան բացի գրել կարգալ և հաշիւել սով- րայնեւը նմանապէս և գիտութիւննե- րի, գեղեցիկ արվեստների սկզբունքը աւանդել, որովհետև ներկայ ընկերու- թիւնը էլ չի բաւականանում նորանով որ կինը կար ու լուացը անելու մէջ և կերակուր երկելու մէջ վարժ լինի, այլ ինքը մտաւորապէս աւելի զարգացած լինելով՝ նոյնը պահանջում է և կնոջից : Իսկ կնոյ յառաջագիտութեան շաւղից այն տարրական զարգացման սահմանը բնական անելու պահանջը նորա մտա- լոր զարգացմանը կատարեալ ազատու- թիւն և միջոց տալը՝ դեռ այն ընդհան- րութիւնը չէ գտել, որ պէտք էր, որ Ամերիկայի մէջ միայն տեսնուէինք : Այնտեղ կինը մտաւոր և գործնական ազատ զարգացման միջոց ունենալով, կեանքի մէջ ամենատեսակ պաշտօններ վարելու պատրաստութիւն և իրաւունք ունի, այն պաշտօնները որոնք դեռ Եւրոպայի մէջ միայն տղամարդերին մատչելի են :

Եւրոպայի մէջ միայն Չիլիքերիայի փոքրիկ երկրի Յիւրիկ կանտօն (նա- հանգն) է որ կնոյ անկախութեան և տղամարդերի հաւասար դրութեան ի- րաւունքը ամէնից աւելի բարձրաճայն խօստովանում է և աշխատում : Ամերի- կայի օրինակին հետեւելով կանացի սե- ռին այն մտաւոր և գործնական կըր- թութիւնը տալ, որով նա ընկերական կեանքի մէջ անկախ դրութիւն ընդու- նել կարողանայ, զարգանայ, և ստըր- կութիւնից ու անբարոյականութիւնից ազատվի : Կանայք որոնք արուեստի կամ գիտութեան հմտութիւն ունին, որոնք այն միջոցներով իրանց կեանքը ապահովացնել կարող են, նրանք պա- րապրողութեան և անբարոյականու- թեան զօհ չեն լինի : Կնոյ ներկայ տը- խուր և ապօրինի վիճակը հասկանալով և Չիլիքերիայի գաղղիախօս նահանգ- ները, նրա ազատ զարգացման համար Եւրոպայի ամէն ժողովուրդներէն ա- ւելի են աշխատում : Երեւելի, Նոյ- չաթիլ, Լօզանի աղջկանց բարձրագոյն դպրոցները վկայ են դրած իս : Բացի այս այն գործնական դպրոցները որոնց մէջ կանայք կրթվելով, ընդունակ են դաստիարակներ լինելու, տէրութեան ծառայութեան մէջ պաշտօններ վարե- լու, վաճառականութեան գործնակա- նութեան մէջ յառաջանալու, որով նո- քա մի կողմանէ ստրկական դրութիւ- նից ազատվում են և միւս կողմանէ մարդկութեան յառաջագիտութեան մշակների թիւը աւելացնում :

Չիլիքերական դաշնակցութեան Յիւ- րիկ նահանգը, որ այսօր Եւրոպայի մէջ ուսման պետական հասարակապե- տութեան միակ ներկայացուցիչն է (1868-ից սկսած), որի ժողովրդական երկսեռ դպրոցները շատ դիտմամբ Եւ- րոպայի միւս տէրութիւնների համար դպրոցական յառաջագիտութեան օրի- նակ են, այս փոքրիկ տէրութիւնը որ իր ամբողջ ուղղութիւնը ժողովրդ-

դական դաստիարակութեան վրայ ու- նի դարձրած, որպէս զի մտաւոր զար- գացումը ընդարձակ և հաստատ հիմն ունենայ, սա էր և է դեռ իւրապիւր մէջ առաջին կառավարութիւնը որ պաշտօ- նական կերպով կանանց դիտնական զարգացման համար իր համալսարանի դռները բաց արեալ : Եւ ահա այսօր Յիւրիկի համալսարանի բաղմոցների վրայ ինչպէս երիտասարդ տղամարդիկ, նոյնպէս և կանայք միասին նստած մարդկային հասարակաց հարստու- թիւնն ու բարիքը—գիտութիւնները— իրանց օգտակար են աշխատում :

—Այսօր պաշտօնական հրատարա- կութիւններից տեսնում ենք որ 63 կա- նացի սեռի կանոնաւոր ուսողուհիք (1) հետեւում են համալսարանական տե- սական և գործնական դասերին, վայե- լելով այն ամեն իրաւունքները, որոնք առ հասարակ մի ուսանողի տուած են : Այս 63 ուսանողուհիներից 52-ը բժշ- կական բաժնի մէջ են և 11-ը իրիստ- փայական (այսինքն պարագում են կամ բնական գիտութիւններով և կամ պատ- մական մանկավարժական կամ պարզ փիլիսոփայական տարկաններով) : Բաց ի այս 63 ուսողուհիները, Յիւրիկի բաղ- մարուեստեան դպրոցի (Պօլիտեխնի- կում) մէջ իւր կանոնաւոր աշակերտու- հիներ սովորում են երկու ռուս կա- նայք (2) : մինը մեքենագործութիւն միւսը գործնական քիմիայ (տեխնիօ- գի) : Այսուհետեւ ըստմարուեստեան դպրոցի այս երկու աշակերտուհիները ուրիշ հետեւողներ չստ կուսենան, չը- նայեցեալ որ նախապաշարմունքը հա- զայ տեսակ խոջնդոտներ է ձգում նը- րանց վստահ, հաստատ և յառաջա- դիմութեան ընդունակ քայլերին :

Ամէն նոր գաղափար, նոր գործ՝ միշտ դժուարութեամբ է ընդհանրա- նում, դժուարութեամբ կատարելու- թեան հասնում : Այս բնական օրէնք մի է, որից ազատուել չէ կարելի, որով- հետեւ մարդս ինչպէս մարմնաւոր նմա- նապէս և մտաւոր կողմանէ հնանալու, մաշկելու ենթարկուած է, և այս դը- րութեան մէջ նա ընդունակ չէ, նորու- թեան, նա պատեւազմում է սրա դէմ : Բայց եթէ նոր գաղափարը բնական է, պահանջ հասարակական կեանքի, հը- նամու կուսակցութեան մի ընկերութիւն նրան յաղթել անկարող է, և եթէ պա- տահի որ յաղթի, յաղթութիւնը կարճ ժամանակով է :

11

Քանի մի օր առաջ մի առժամանակ- եայ լուսթիւնից յետոյ, նորից փոթու- րիկ վերլիցեալ կանանց բարձրագոյն կրթութեան մանաւանդ նրանց բժշ- կութիւնով պարագելու դէմ : Թէօքօր

(1) Սրանց մեծ մասը Ռուսներ են : 65/ից միայն 10-ը ուրիշ ազգերից են : Գեղմանա- ցի, Անգլիացի, և Ամերիկացի :

(2) Յիւրիկի բաղմարուեստեան դպրոցը մտնել յանկացողը անշուշտ սկստ է քննու- թիւն տալ, զի ստուարապէս մատենատիրա- յից և բնական գիտութիւններից : Այս քննութիւնը խիտ է, որովհետեւ քննող- ների թիւը ամեն սկզբնոր (վեցսունական ուսման ընթացք) աւելի շատ է քան թէ նո- ցա դպրոցի մէջ տեղ տալ կարելի է : Գեր- մանայի բաղմարուեստեան դպրոցները միա- նելու համար, այսպէս և համալսարաննե- րը, քննութիւն տալու պահանջ չկայ : — Ուղղվ չէ այն լուրը որ Յիւրիկի համալ- տարան մտնող կիներէն քննութիւն են պա- հանջում : Սրանից միայն պահանջում են բարոյական վերապիլ, որ կարելի է քա- ղաքային կամ նահանգական պրոպագն- Կամ որ աւելի զիւրիկ կարող էր լինել : մի քահանայից ստանալ և ներկայաց ել այստեղ համալսարանի կառավարութեանը : — Համարում է պրոֆէսորներից շատերը կա- մենում են կանանց համար բացառութիւն անել եւ սոցանից զիմնագիտական քննու- թիւն պահանջել : Բայց կառավարութիւնը դեռ չէ վճարել այս խնդիրը եւ յոյս կայ որ նա մերժէ պրոֆէսորների պահանջը :

Բիշօփ, Միլենինի երեւելի անդամա-
գրանքն է Գիւրգիսիոյ շնորհաւոր մի թերթ
հրատարակող որի մէջ կանանց ուսման
հարցը և նրանց բժշկութիւնով պարա-
պելը գաղափարներն է, մի թերթ որ
իր բանադատական թոյլ փաստերի հե-
տեւագէտ անուղիղ հետեւանքների
դիտմամբ առանձին արժանաւորու-
թիւն մի չունի, բայց որովհետեւ գը-
րօղը Բիշօփն է այս պատճառաւ բոլոր
օրագրները յիշում են այս թերթը և
նրանցից մեծ մասը հերքում Բիշօփի
մտքերը :

Բիշօփի գրած մտքերը կանանց գիտ-
նական զարգացման, մանաւանդ բը-
ժշկութիւնով պարապելու դէմ՝ կամ
լոկ անձնական զգացմունքներ են կամ
հիպոթէզներ — գիտնական փաստերով
դեռ չապացուցած են թաղութիւններ
և կեանքի մէջ յաճախ կրկնաց զրոյց-
ներ : — Բիշօփի զգացմունքն է ընդդէմ
է, նա չէ կարող նայել այն կնոյ զրայ
որ մի դիակի առաջ կանգնած, քըն-
նում է, ուսանում է մարդի կազմը-
ուածքը, որ նա տղամարդ ուսողների
հետ մարդիս կազմուածքի վրայ դա-
ստիստութիւն է լսում ևն : ևն :

Մի թէ՛ այս պատճառ մի է որ կինը
բժշկութիւնով չի կարող և չը պէտք
է պարապել : Մի թէ՛ բանադատք այս-
պիսի ծանր հարցը քննելուս իր անձ-
նական զգացմունքն պէտք է հետեւի
— Անձնական զգացմունքները դատա-
տանի ժամանակ, դատաւորի վրայ չը
պէտք է ներգործեն : Նրա վրա իրո-
ղութիւնները միայն ազդեցութիւն
պէտք է ունենան և սրանցից միայն
պէտք է նա հետեւանքներ կամ վճիռ-
ներ հանէ : Մարդիկները զգացմունք-
ները շատ տարբեր են, միշտ փոփոխու-
թեան ենթակայ : Նրանց մեծ մասը
սովորութիւններից և դատարարակու-
թիւնից կախած են :

Բացի այս անձնական զգացմունքը,
յիշեալ գիտնականը բերում է մի ու-
րիշ պատճառ ևս, կնոյ բժշկութիւնով
է առհասարակ գիտութիւններով պա-
րապելու անընդունակութեան՝ տղա-
մարդերի հետ համեմատելով : — Նա
պնդում է որ առհասարակ կինը տղա-
մարդից մասնաւորապէս և մարմնաւո-
րապէս ստորադասեալ է : Նա յիշում է
կին և այլ մարդի ուղեղի և գագաթի
համեմատական քննութիւնների հետե-
ւանքը : Բայտ Բիշօփի տղամարդի ուղե-
ղը միջին թիւով աւելի ծանր է, աւելի
մեծ բացարձակ կշիռ ունի քան թէ կը-
նոյ :

Հէրմանը, նմանապէս մի յայտնի
գերմանացի ֆիզիոլոգ, հէրքում է Բի-
շօփի այս պնդումները և չափազանց
վատահալութիւն է անվանում այս տե-
սակ միջոցներով այն ծանր հարցը վըճ-
ուել կամենալը : — Ըստ Հէրմանի կնոյ
ուղեղը աւելի մեծ բացարձակ կշիռ ու-
նի քան թէ տղամարդի, իսկ համեմա-
տական կշիռը երկու սեռի ուղեղի գը-
րեթէ նոյն է : — Առանց երկարաբա-
նութեան չեմ կարծում որ յաջողի ինձ
այս գիտնական վճիռ վրայ ընթերցո-
ղիս կատարեալ դատարար տալ, այս
պատճառաւ բաւականաւոր էմ յիշել
որ այս ինքիւրը գիտութեան մէջ վըճ-
ուած չէ, և ուղեղի գորշ հիւթի կամ
այսպէս անվանեալ ուղեղի մանվածքի
յարբարութիւնը (որոնցից, ըստ ֆի-
զիոլոգների մտաւոր գործողութիւննե-
րը զլիւսաւորապէս կախած են) դէպի
մտաւոր բնդունակութիւնները, դեռ
գիտութիւնը չէ մէկնել :

Հէրմանը ենթադրութիւնով ընդու-
նելով նաև Բիշօփի պնդումն որ տղա-

մարդի ուղեղը աւելի մեծ բացարձակ
կշիռ ունի քան թէ կնոյ (որ ըստ նո-
րա ուղեղ չէ), այնուամենայնիւ նա չէ
կարծում որ այս կնոյ բնական անըն-
դունակութեան պատճառ կարող է լի-
նել : Ինչպէս մկանունք մարդողութիւ-
նով մեծանում ամբողջում են, այսպէս
և ուղեղը շարունակ կրթութիւնով —
մտաւոր մարդողութիւնով աճել՝ ու-
րեմն ծանրանալ կարող է : Տղամար-
դիք դարերով, իրանց ուղեղը մարդե-
լով մասւոր տիպատութիւնով, կարող
էր ուրեմն նա նրանց մօտ աճել ծան-
րանալ : Թող կանացի դաստիարակու-
թիւնը, նրանց մտաւոր զարգացումը
ազատ ընթացք ստանայ, այնպէս ինչ-
պէս տղամարդների, այն ժամանակ
կանացի ուղեղը ևս ժամանակով աւե-
լի կաճի, կը ծանրանայ : Ուստի հե-
տեւում է որ այս անատոմիական և ֆի-
զիոլոգիական քննութիւնները ամենե-
ւին ապացոյց չեն կնոյ բնական ստո-
րագրութեան համեմատելով նրանց
տղամարդիքների հետ :

Բիշօփը աշխատում է նմանապէս
կնոյ պակասաւորութիւնը և ստորա-
դասութիւնը տղամարդից կեանքի
փորձով ապացուցանել : Նա գրում է
«տղամարդը քաջասիրտ է, անվախ,
խիստ, ժպիւրհ, դաժան, փակված»
կինը՝ երկչոտ, անձնատուր, մեղմ,
քնքուշ, բարեսիրտ կամ բարեհոգի :
Տղամարդը հաստատ է, այն ինչ կինը
փոփոխական՝ իր սկզբունքին հակա-
ռակ : Տղամարդը համազմունքով է
գործ բռնում, կինը զգացմունքով :
Առաջինի զգացմունքի վրայ խելքն է
իշխում, իսկ երկրորդի, բնդհակառա-
կը զգացմունքը խելքի վրայ, և այն
և այլն : Այստեղ առհասարակ յիշում
է գերմանացի գիտնականը ամէն յատ-
կութիւնները, որոնք մեր պապերից և
տատերից միշտ լսում ենք :

Կնոյ այս թոյլութիւնների պատ-
ճառները դժուար չէ գտնել, որոնք
ոչ թէ բնական են, այլ դատարարա-
կութեան, կնոյ անդեալ և ներկայ ըն-
կերական գրութեան հետեւանք :

111

Զվիցերացիք տեսութիւն շատ չեն
սիրում, սրանք շատ չոր ու հաշիվող
մարդիկ են : Այն ինչ եւրոպայի միւս
տէրութիւններում անհատներ, կեանքի
ազատութեան հարցը լուծելու համար
հաստ ու բարակ գրքեր են գրում, սը-
րանք առանց երկար վիճաբանութեան
այս հարցը կամենում են փորձով վըճ-
ուել, և որ իրաւ միակ միջոցն է : Պա-
տահական երեւոյթները (այսինքն ո-
րոնց պատճառները չէ գտած, բայց
ունին անշուշտ իրական պատճառ),
մարմնակազմութեան վարդապետու-
թիւնները ևն, որոնք կնոյ տղամարդից
տարբերում են, բայց այս պապերից
մնացած կարծիքները, չափաւորապէ-
սպէս փոխելով, Յիւրիսի հասարակապե-
տական կառավարութեանը, որ նոյնն
է աւել ժողովրդին, չը խափանեցին
կնոյ բարձրագոյն կրթութիւն ստա-
նալու ազատութիւն տալ, և փորձով
տեսնել՝ արդեօք նա բնդսեակ է գի-
տութիւնների մէջ այնպէս խորթ թա-
փանցել ինչպէս տղամարդը առհասա-
րակ, թէ ոչ :

1867 թվականից սկսած (1) երբ պաշ-

(1) Արդէն 1864ին թոյլ էր տրուած կա-
նանց համալսարանի մէջ դասեր լսել առանց
ուսանողական իրաւունքները չորհելու :
Երբև աղաւ ունիւրդիւրներ առաջինն էին
երկու Թուս կանայք : Սոցանից օրիորդ
Մուսոյիս առաջինն էր որ 1867 ին կառու-
նաւոր ուսանողներ թիւը ընդունվեցաւ :

տոնական կերպով կնոյ համալսարանա-
կան զարգացումն ստանալու իրաւունք
տրվեցաւ մինչև այսօր փորձը հաստա-
տեց և հաստատելու է որ կինը գիտ-
նական զարգացման բնդունակ է, չնա-
յեցեալ նրա արդեան պակասաւոր նա-
խապատրաստութեանը : Այս համեմա-
տարար կարծ միջոցի մէջ արդէն վեցը
բժշկական ծանր քննութիւնը տալով և
ինքնուրոյն գիտնական աշխատութիւն-
ներ հրատարակելով՝ բժշկելու իրա-
ւունք և դոկտորի տիտղոս ստացան (1) :
Ճշմարիտ է նրանց գիտնական աշխա-
տութիւնները գիտութեան մէջ դարա-
գլուխ չեն կազմում, բայց թող մի և
նոյն ժամանակ յիշենք, որ հազարաւոր
տղամարդիկ նմանապէս նոյն պայման-
ներով դոկտորի քննութիւն են տալիս,
առանց մի նշանաւոր գիտնական աշ-
խատութեան, և իրանց ամբողջ կեանք-
ը մէջ հազարաւորները գիտութեանը
մի նշանաւոր ծառայութիւն չէ ցոյց
տալի : Արգելել ուրեմն սրանց բժշկու-
թիւնով պարապելու կամ գիտնական
զարգացումն ստանալու : — Ինչպէս տը-
ղամարդիքների մէջ փոքր է գիտու-
թեանը նշանաւոր ծառայութիւն ա-
նողների թիւը, այնպէս և պէտք է կա-
նանց մէջ լինի իսկ այսօր գիտութիւ-
նով զբաղվող կանանց թիւը, տղամար-
դիքների հետ համեմատելով, այնչափ
փոքր է :

Ինչպէս որ յիշեալ ներկայ ժամանա-
կիս կանանց ցոյց տուած յառաջագի-
մութիւնը, այսպէս և անցեալ ժամա-
նակների պատմութիւնը ապացոյց է,
որ եթէ կինը բարեբաղդ հանգամանք-
ների մէջ է եղել կրթութիւն և զարգա-
նալու ինչպէս մարդ և որ ինչպէս կին
նա թէ գիտութիւնների և թէ արվեստ-
ների մէջ տղամարդիկների հետ իւր
հմտութիւնով և ճարտարութիւնով մա-
քաւել է : Աւելորդ չեմ համարում այս-
տեղ իբրև ապացոյց այս ճշմարտու-
թեան մի քանի պատմական փաստեր
յիշել, որոնք անդիպել հուշակաւոր
փիլիսոփայ, Զ. Ս. Սիլլի կանանց ստը-
կութեան դէմ դրած տեղերից են հա-
նած :

Հին Յունների մէջ Սաֆօ կինը երևելի
բանաստեղծներից մէկն էր՝ համարում
Միրթիս՝ որ Պինդարի ուսուցչուհին էր
և Գարիննա որ Պինդարի հետ բանաս-
տեղծութեանց մէջ մրցելով՝ հինգ ան-
գամ նրան յաղթելով, բանաստեղծու-
թեան մրցանակ էր ստանում, քոքը
արժանաւորութիւն չը պէտք է ունե-
ցած լինի, որ Պինդարի նման հուշա-
կաւոր անձի հետ յիշատակվում և հա-
մեմատվում են : Ասպասիա փիլիսոփա-
յական գրաւոր աշխատութիւններ չէ
թողել, բայց յայտնի փաստ մի է, որ
Սոկրատէս նորանից իմաստութիւն և
խրատ է սովորել : Ինքը Սոկրատէսը
խոստովանում է այս :

Նոր ժամանակի կանանց զօրաւոր
աշխատութիւնները բաղմութիւն են,
որոնց մեծ մասին թէ և ինքնագիւտ
սեփականութիւնը պակասում է, որ
նոյնպէս նրանց պակասաւոր դաստիա-
րակութեան հետեւանք է : Բոլոր նոր

(1) Առաջին բժշկական քննութիւն տրուող
կինն էր օրիորդ Մուսոյիս (այժմ տիկին Է-
րիսման) : Սրան հետեւեցին Օրիորդ Մուսոյի
Անդրիանի : տիկին Բոֆուս Ռուս, օրիորդ
Կիմօն Ամբրիկացի, տիկին Էտիկին Անդրի-
անի : և քանի մի օր առաջ օրիորդ Վօկր
Անդրիանի : Վերջինը տեղւոյս համալսարանի
և նահանգական հիւանդանոցի գլխաւոր
բժիշկի պրոֆէսոր Բիլոմբի ասիստէնտ (օգ-
նական) ընտրվեցաւ : Կանանց ստալին
օրինակը Եւրոպայի մէջ :

գրականութեան մէջ չը կայ այնպիսի
գրաւոր աշխատութիւն որ ոճի բարա-
կութեան, մտքի ճիշդ ու խելօք բա-
յատրութեան մէջ տիկին Ստալի աշխա-
տութիւնից գերազանցի : Նմանապէս
պարզ ու ճարտար արվեստական կա-
տարելութիւնը Ժօրժ Սանդի արձակ
գրութեան, որի ոճը մարդի շղերի վը-
րայ Հայդընի կամ Մօցարտի միաձայն
երաժշտութեան նման է ազդում, ի-
րանից բարձր չունի : Հայեցական փի-
լիսոփայութեան մէջ Հէլլիգ, Մատեմա-
տիկայի մէջ Սոմէրվիլ, Ժողովրդական
գիտութեան, գեղեցիկ արվեստների
և այլն, կանայք եթէ կանոնաւոր կըր-
թութիւն և հմտութիւն են ստացել,
յայտնի են իրանց յառաջագիմութիւ-
նով :

1111

Այս ներկայ և անցեալ պատմական
ճշմարտութիւնները, կատարեալ յառա-
ջագիմութիւնը մարդկութեան պահանջ-
նում են որ մարդկութեան կէսը — կա-
նայք — տղիտութեան չլքաներից ա-
զատվեն, և զարգանալով մտաւոր և
գործնական աշխատութեան մշակների
թիւը բազմացնեն : Այն տմարդի գա-
ղափարը, որ կինը մարդի գվարձու-
թեան, նրա հպատակը լինելու համար
է ստեղծված և ոչ նրա հաւասար ըն-
կերը, այն գաղափարը քանի գնում
հալածվում է լուսաւորութիւնից : Այս-
օր զարգացած անձ մի էլ չի վնասում
այնպիսի կին, որին միայն արտաքին
գեղեցկութիւն է զարգարում, կամ
յաճախ՝ սորա տեղ հարուստ բաժին-
քը, այլ նա որոնում է ճշմարիտ կենա-
կից, ընկեր : որի հետ նա իր մտաւոր
կամ գործնական աշխատութիւնները
բաժանել կարող է, որի հետ նա իր
քաղաքական և բնկերական հարցերի
վրա դատել կարող է, որից խորհուրդ-
առնել և որին խորհուրդ տալ կարող
է : Եւ միայն այսպիսի այր և կին, այս-
պիսի ընտանիք երջանիկ է : Այն ըն-
տանիքի մէջ, ուր մէկը «տէր է» միւսը
«ծառայ» կամ հնազանդ յաւիտենական
լուութեան դատապարտուած այն ըն-
տանիքի մէջ երջանկութիւն անկարող
է տիրել : Երջանիկ է այն ընտանիքը
որի մէջ այրը և կինը մի և նոյն ժամա-
նակ տէր և ծառայ են, կամ աւելի
ճիշդ ասել, արդարութիւնն ու խել-
քն է հրամայողը : — Վերջին խօսքե-
րից կարելի էր հետեւեցնել որ տը-
ղամարդը իրաւունքով է հրամայող,
գլուխ ընտանիքի, որովհետեւ նա ընդ-
հանրապէս աւելի զարգացած է : Բայց
չը պէտք է մոռանալ որ տղամարդը
բռնութիւնով է գլուխ ընտանիքի :
Նա մեծ յանցանք և անարդարութիւն
է գործում անդադար, կնոյ ստրկու-
թեան մէջ պահելով, նրա զարգացմա-
նը բնդդիմանալով : — Զարգացած հա-
սարակութիւնների ջանքն է ահա, այս
ժամանակական յանցանքը, այս անի-
րաւութիւնը վերացնել իրանց միջոց,
կնոյ ազատ զարգացման միջոց տալով
Եւ այս հգտումով միայն կարող է ըն-
տանիքը երջանիկ գրութեան մերձա-
նալ, և մարդկութիւնը աւելի արա-
գութիւնով քան թէ մինչև յարդ յա-
ռաջանալ :

Յիւրիս 1872, յուլիսի 7ին
Յ. Աբելանց
(Մշակ)

ՍՈՒՆՊ ՂԱԶԷԹԱ
ԿԱՐԱՊԵՏ Յ. ՓԱՆՈՍԵԱՆ
Գալթիատա Բէնճէլ մովհ Բազարընտա
Ն. 29 կաթի խանընտա